

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4.13 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ.....	2
4.13.1 Մակրոտնտեսական վիճակը.....	2
4.13.2 Գնաձ.....	4
4.13.3 Ներդրումներն ըստ ոլորտների.....	5
4.13.4 Աղքատության մակարդակը.....	7

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 4.13.1. Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի կողմից կատարված ներդրումներն ըստ ոլորտների.....	6
--	---

ՆԿԱՐՆԵՐ

Նկ. 4.13.1 Տնտեսական աճը համաշխարհային ճգնաժամից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո ³	
Նկ. 4.13.2 ՀՆԱ կանխատեսումներ Հայաստանի և Տարածաշրջանի համար (Համաշխարհային բանկ).....	4
Նկ. 4.13.3. Հայաստանի գնաճի միտումները (1991-2010թթ.) ⁶	5
Նկ. 4.13.4. Տնտեսական աճը և ներդրումներն ըստ ոլորտների ⁵	6

4.13 Տնտեսական իրավիճակը

Հայաստանի տնտեսությունը 1991թ. անկախությունից հետո զգալի տնտեսական աճ է գրանցել: Այն համարվում է միջինից ցածր եկամուտ ունեցող երկիր: 2012թ.¹ ՀՆԱ-ն կազմել է 9,95 մլրդ. ԱՄՆ դոլար: Նախքան 2009 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, Հայաստանի արձանագրած աճի ցուցանիշը եղել է մոտ 13%: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը լուրջ ազդեցություն ունեցավ Հայաստանի վրա, որի հետևանքով աճի ցուցանիշը 2010թ. հասավ ընդամենը 2,1% - ի, 2011 թ.² 4,6% - ի: Իսկ 2012թ.³ միտումներն էականորեն բարելավվեցին՝ գրանցելով 7,2% տնտեսական աճ:

4.13.1 Մակրոտնտեսական վիճակը

Անկախացումից ի վեր, Հայաստանի տնտեսությունը ծայրահեղ տատանումների է ենթարկվել, ներառյալ՝ 1992թ. գրանցված 42% - ով ՀՆԱ - ի անկումը և 2007թ. 14% - ով աճը: Կառավարության բարեփոխումների օրակարգում շեշտադրվում էր գնի ազատականացման, հողի սեփականաշնորհման և իրավունքների գրանցման, ձեռնարկությունների սեփականաշնորհման և առևտրի ու ներդրումների ազատականացման հայեցակետերը, որը հանգեցրեց տնտեսական աճի բարձր մակարդակի 2001-2007թթ. ընկած ժամանակահատվածում: Այս շրջանում մեկ շնչի հաշվով ՀՆԱ - ն եռապատկվեց և աղքատության ցուցանիշը նվազեց 56% - ից մինչև 28%⁴:

Իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ Հայաստանը Արևելքում և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում դարձավ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքներից խիստ տուժած երկրներից մեկը: Նկ. 13.1-ում հստակ ցույց է տրված այդ ընթացքում տնտեսության բոլոր ոլորտներում գրանցված աճի հիմնական անկումը:


Այս ընթացքում արտահանումները կրճատվեցին 33%-ով, իսկ փոխանցումները (Հայաստանի տնտեսության կարևորագույն տարրը)՝ 35%-ով: Այս շրջանում տնտեսական ճգնաժամի վրա հետագա ազդեցություն ունեցավ 2008 թ. օգոստոսին Ռուսաստանի և Վրաստանի միջև ծագած հակամարտությունը՝ սահմանափակելով ապրանքների տեղափոխման նպատակով Հայաստանի կողմից Վրաստանի տարածքով երթուղու

¹ Համաշխարհային բանկ, (2012թ.), World Bank – Armenia Partnership: Country Program Snapshot, www.worldbank.org (accessed August 28th, 2012)

² Համաշխարհային բանկ, (2012թ.), World Bank – Armenia Partnership: Country Program Snapshot, www.worldbank.org (accessed August 28th, 2012)

³ Համաշխարհային բանկ, (2012թ.),

օգտագործումը⁵: Դրական աճ է արձանագրվել 2010-2011թթ.: Ակնկալվում է, որ մոտ ժամանակներում Հայաստանը կպահպանի 4-5% աճ, ինչպես պատկերված է Նկ. 4.13.2-ում:




Source: Ministry of Finance, Republic of Armenia.

Նկ. 4.13.1 Տնտեսական աճը համաշխարհային ճգնաժամից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո⁶

⁵ ibid

⁶ World Bank, (2011), Armenia, Poverty Update Using Revised Poverty Lines, Europe and Central Asia Unit, World Bank ZT520088
 Նոյնիս 2016թ. Տարբերակ 10 էջ 4.13.3




Նկ. 4.13.2 ՀՆԱ կանխատեսումներ Հայաստանի և Տարածաշրջանի համար
(Համաշխարհային բանկ)

4.13.2 Գնաճ

Անկախացումից հետո, Հայաստանը վերապրել է արժեզրկման և գնաճի երկու ժամանակաշրջաններն էլ, ինչպես կարելի է համոզվել Նկար Նկ. 4.13.1-ից: Վերջին տարիների գնաճի հիմնական ծանրաբեռնվածությունն ընկել է սննդի վրա, չնայած 2011թ. աճը դադարեց, թույլ տալով արժեզրկման մակարդակը պահել ($4\% \pm 1.5$) մակարդակի շրջանակներում, որը Հայաստանի Կենտրոնական Բանկի նպատակակետերից մեկն էր⁷: 2012թ. գրանցվել է 2,6% գնաճ:

⁷Համաշխարհային բանկ (2012a)
ZT520088
Հունիս 2016թ.




Նկ. 4.13.3. Հայաստանի գնաճի միտումները (1991-2010թթ.)⁶

4.13.3 Ներդրումներն ըստ ոլորտների

Հայաստանի տնտեսության գերակա ճյուղերը գյուղատնտեսական ձեռնարկատիրությունն ու հանքարդյունաբերությունը, որի դերը ինչպես երևում է, աճում է: 2011թ. տնտեսական աճի կեսից ավելին պայմանավորված է արդյունաբերությամբ (գյուղատնտեսությունը և հանքարդյունաբերությունը միասին), իսկ արտահանման շահույթի 60%-ը պայմանավորված է հանքարդյունաբերական գործունեությամբ (Տես Նկ. 4.13.4):

Հայաստանի Համաշխարհային բանկը Հայաստանի Կառավարության հետ միասին վերջին տարիներին մշակել է Ընդերքի մասին նոր օրենսգիրքը (2012թ.): Ընդերքի մասին նոր օրենսգրքի մշակումից ու իրագործումից հետո Հայաստանի Կառավարության ստացած եկամուտներն արդյունաբերությունից ավելի քան կրկնապատկվել են (2011թ. 17,9 մլն ԱՄՆ դոլարից 2013թ. դարձել են 45,3 մլն. ԱՄՆ դոլար)⁸:

⁸ <http://www.worldbank.org/en/news/feature/2014/04/15/infographic-responsible-mining-in-armenia>



Նկ. 4.13.4. Տնտեսական աճը և ներդրումներն ըստ ոլորտների⁵

Սյունիքը Հայաստանի ամենահարուստ մարզն է՝ շնորհիվ Կապանի շրջանում հանքարդյունաբերության: Վերջինիս կարևորությունը Հայաստանի տնտեսության մեջ ակնհայտ է, ինչպես պատկերված է Աղյուսակ Աղյուսակ 4.13.1-ում: Համեմատական առումով, Վայոց Ձորի կարևորությունը ազգային էկոնոմիկայի համար ներկայումս սահմանափակ է. արդյունաբերության ներդրման մեծ բաժինը ընկնում է Ջերմուկում հանքային ջրի շշալցման երկու գործարանին:

Աղյուսակ 4.13.1. Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի կողմից կատարված ներդրումներն ըստ ոլորտների⁹

Ոլորտ	Մարզի ներդրումը հանրապետության տնտեսության մեջ
Սյունիք	
Արդյունաբերություն (հանքարդյունաբերություն և էլեկտրատեղակայաններ)	18.3%
Գյուղատնտեսություն (բուսաբուծություն և անասնաբուծություն)	5.7%

⁹ Armstat, (2011), Հայաստանի մարզերը, www.armstat.am/en (2012թ. սեպտեմբերի 4-ի դրությամբ)

Ոլորտ	Մարզի ներդրումը հանրապետության տնտեսության մեջ
Շինարարություն	7.2%
Մանրածախ առևտուր	0.9%
Ծառայություններ	1.1%
Վայոց Ձոր	
Արդյունաբերություն	0.8%
Գյուղատնտեսություն	2.2%
Շինարարություն	0.9%
Մանրածախ առևտուր	0.4%
Ծառայություններ	0.4%

4.13.4 Աղքատության մակարդակը

Հայաստանում 1999-2007թթ. ընկած ժամանակահատվածում աղքատության մակարդակը զգալիորեն նվազեց և ավելի քան մեկ միլիոն հայեր դուրս եկան ճգնաժամային վիճակից: Սակայն այս իրավիճակը փոխվեց համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետ մեկտեղ, որի արդյունքում բնակչության մոտ 30%-ը վերադարձավ աղքատության նախկին մակարդակին: 2010թ. անապահով բնակչության թվաքանակը Հայաստանում մոտ 1.2 միլիոն էր կազմում¹⁰: Գյուղական և քաղաքային շրջաններում ևս նկատվեց աղքատության մակարդակի 8% բարձրացում: Ակնկալվում է, որ այս ցուցանիշը կնվազի ՀՆԱ - ի աճին զուգընթաց:

¹⁰Համաշխարհային Բանկ , (2012),